



Լսարան՝ «Քրտական Քաղաքական Կառույցներու Դիրքորոշումը Հայոց Ցեղասպանութեան Հարցին Մէջ» Նիւթով

0 Գաղութային November 5, 2015

PRINT EMAIL A- A+



Երեւանի պետական համալսարանի դասախօսներու Լիբանան այցելութեան շրջագիծին մէջ, կազմակերպութեամբ «Ազդակ» օրաթերթին եւ Համազգայինի Լիբանանի Շրջանային վարչութեան, երկէ՛ չորեքշաբթի, 4 նոյեմբերի երեկոյեան ժամը 8:00-ին, «Ազդակ»-ի «Փիւնիկ» սրահին մէջ տեղի ունեցաւ լսարան՝ «Քրտական քաղաքական կառույցներու դիրքորոշումը Հայոց ցեղասպանութեան հարցին մէջ» նիւթով: Զեկուցաբերն էր Երեւանի պետական համալսարանի Հայագիտական հետազոտութիւններու հիմնարկի հայ-քրտական յարաբերութիւններու բաժնի ղեկավար Վահրամ Պետրոսեան:

Լսարանի բացման խօսքը արտասանեց Ազգային առաջնորդարանի տեղեկատուական բաժանմունքի պատասխանատու Բաֆֆի Տեմիրճեան: Ան նկատել տուաւ, որ Երեւանի պետական համալսարանի պատուիրակութեան Լիբանան այցելութեան առաքելութիւնը ունի կրթական, ինչպէս նաեւ լսարաններ կազմակերպելու նպատակ: Ապա ան ներկայացուց օրուան զեկուցաբերին կենսագրական տուեալները:

«Փառուրդ փոյնթ»-ով ներկայացուցած իր նիւթին մէջ Վահրամ Պետրոսեան յայտնեց, որ հայ-քրտական առնչութիւնները կարելի է բաժնել 3 հիմնական մասերու. ա) 1878-1923 ժամանակաշրջանը, որ հայկական հարցի միջազգային իրաւական ձեւաւորման եւ թուրքերու դէմ պայքարին մէջ քիւրտերու հետ միասնական ճակատ ձեւաւորելու ձեռնարկումներու շրջանն է: Ան բացատրեց, որ այս ժամանակաշրջանին հայ-քրտական երկարատեւ եւ հաստատուն համագործակցութիւն ձեռք բերելու ջանքերը ձախողեցան եւ քիւրտերը ներգրաւուեցան Օսմանեան կայսրութեան հայաջինջ քաղաքականութեան մէջ: Պետրոսեան յայտնեց, որ 19-րդ դարէն սկսեալ հայոց պատմութեան մէջ անուանի հայ մտաւորականներ իրենց ուշադրութիւնը կեդրոնացուցած են հայ-քրտական յարաբերութիւններուն վրայ. բ) 1923-1991 թուականներ, երբ Արեւմտեան Հայաստանի մէջ հայ բնակչութիւն գոյութիւն չունենալու պայմաններու մէջ՝ հայ-քրտական համագործակցութիւն ձեւաւորելու, դաշինք կնքելու եւ թշնամիին դէմ միացեալ պայքար մղելու փորձեր կատարելու ժամանակաշրջանն է: Ան ըսաւ, որ այս ժամանակաշրջանին Արեւմտեան Հայաստանը վերածուեցաւ քիւրտերու բնակութեան կեդրոնի, հայ-քրտական հարցերը դուրս եկան միջազգային իրաւական ասպարէզէն, եւ փոխուեցաւ այդ յարաբերութիւններուն տրամաբանութիւնը: Այս թուականներուն ի յայտ եկաւ հայկական կողմի որոշակի գործակցութիւնը. գ) 1991-էն մինչեւ ներկայ օրերը, երբ Հայաստան կարելիութիւն ունեցաւ անկախ եւ ինքնուրոյն քաղաքականութիւն վարելու այս հարցին մէջ: Այս շրջանին քրտական տարբեր կազմակերպութիւններ փորձեր կատարեցին իրենց գործունէութեան ոլորտին մէջ ներգրաւելու Հայաստանի Հանրապետութեան քրտական համայնքը: Վահրամ Պետրոսեան նկատել տուաւ, որ շրջանին մէջ քիւրտերու մեծամասնութեան ինքնագիտակցութիւնը տակաւին ցեղախմբային մակարդակի վրայ էր՝ աւելցնելով, որ անոնք կը ձգտէին օգտագործել Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւններուն, ինչպէս նաեւ սփիւռքի կարողութիւնները՝ խուսափելով Արեւմտեան Հայաստանի եւ հայկական պահանջատիրութեան վերաբերեալ քաղաքական դիրքորոշում արտայայտելէ մանաւանդ որ պատմական Հայաստանի տարածքներուն մէջ ձեւաւորուած ազգագրական պատկերը եւ շրջանի քաղաքական զարգացումները քիւրտերուն համար նպաստաւոր էին:

Բանախօսը նաեւ ներկայացուց վերջերս հրապարակուած տուեալներ՝ Երեւանի մէջ քիւրտերուն հանդէպ հանրային վերաբերմունքին գծով: Ան հաստատեց, որ ժողովուրդի 17,1 տոկոսը խիստ դրական վերաբերմունք կը ցուցաբերէ քիւրտերուն նկատմամբ, 7 տոկոսը՝ խիստ ժխտական, իսկ 34,6 տոկոսը՝ չէզոք են: Այն հարցին, թէ Հայաստանը պետք է աջակցի Թուրքիոյ դէմ պայքարող քիւրտերուն, 19,4 տոկոսը դրական մօտեցում ունեցած է, իսկ 29,4 տոկոսը՝ ժխտական: Իսկ այն հարցին, թէ Քիւրտիստանի պետութեան ստեղծման նախագիծը Հայաստանի մէջ ապրող հայերուն վտանգ կը սպառնա՞, թէ՛ ոչ՞ 13,9 տոկոսը վտանգ տեսած է, իսկ 26,1 տոկոսը վտանգ չէ նկատած:

Անդրադառնալով Հայոց ցեղասպանութեան ճանաչման՝ ան նկատել տուաւ, որ Հիւսիսային Իրաքի քրտական ինքնավար մարզին մէջ այս հարցը դրուեցաւ ապրիլ 2015-ին: Ան ըսաւ, որ այդ մարզի խորհրդարանը կը բաղկանայ 111 անձերէ, որոնց մէջ ունինք 1 հայ երեսփոխան, որ օրակարգին վրայ դրած էր Հայոց ցեղասպանութեան ճանաչման հարցը: Այս հարցին շուրջ պատրաստուեցաւ բանաձեւ մը, որուն տակ ստորագրեցին մօտ 40 անձեր, եւ ասոր իբրեւ արդիւնք բանաձեւը չներկայացուեցաւ, հետեւաբար քուէարկութեան առիթ չտրուեցաւ: Հետեւաբար Հիւսիսային Իրաքի քրտական ինքնավար մարզի խորհրդարանին կողմէ Հայոց ցեղասպանութեան ճանաչման փորձը ձախողեցաւ: Շարունակելով իր խօսքը՝ Վահրամ Պետրոսեան ըսաւ, որ թուրք-քրտական համագործակցութիւնը կարելիութիւն չի տար նման բանաձեւի ընդունումը տնտեսական պատճառներով:

Աւարտին առիթը տրուեցաւ ներկաներուն լուսաբանական հարցումներ ուղղելու բանախօսին:

»